



ՌԵԺԵ · 1863 — ՔՍԱՆԵՐՈՐԻ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ · — ՅՈՒՆՈՒԱՐ

ՏԱՐԵՄՈՒՏ



Հինն անց . վայր չէր հետոցն ի կայս ամրակուռ .
 Յո՛ւ եւ ուրեք նա թէ դրոշմէր զգարչապար ,
 Ահա եւ այն իսկ անցանէր ի հետ իւր ,
 Վայրդ իսկ անվայր եւ անկայուն համայն տարր .
 Նըշմար լոկ խոր յանցս ընթացիցըն սահուն ,
 Գըծեաց ընդ ալս հառաչակուլ մեր սըրտից .
 Ոյր ի զրաւել անդ ի վերջին զարկ ժամուն ,
 Եւ ի հընչումըն զանգակաց հուսկ գանգից ,
 Մընչեցին սիրտք , եւ տըխրութիւն մահատիւ ,
 Ըստուերակերպ մածեաւ զդիմք , ցօղեաց բիբ :

Զերդ անարդիլ ժայռ ծովասոյզ յովկիան ,
 Որոյ անտես ըզհետսն անդէն կարկատեն
 Հերձեալ ալիք , եւ պատառուն ծուկք ծածան .
 Եւ անդունդք զամն անցեալ անլիր ամփոփեն
 Յաւերթութեան անվայրափակ դամբանին ,
 Ո՛հ . եւ անկցին զնովաւ մոռացք կափարիչ .

Դիւրապատիր են բարբ փոփոխ մահացուին ,
Այսօր ի սուգ , վաղիւ ի խինդ ամօքիչ ,
Մինչ ողբաձայն լռէ զանգակն անցելոյն ,
Ահա նորոգ դայ Տարեմուտ զուարթ յողջոյն :

Որպէս ծըղեաց ծաղկաբերից գարնայնոյ
Ի ցամաքել , եւ ի սերմանց նոցին հատ
վերականցաղ ծնանի ծաղիկ , ծիլ ոստոյ .
Հանգոյն եւ ամ յամէ բըղխէ տարանջատ .
Դարձեալ գայ նոր՝ զոր մահացուն խընդամիտ
Պաշտէ ողջոյն անդ ի ներքոյ կաղնեղարդ .
Դաւար շիւղոյ մորճ ձիթենւոյն ոստախիտ ,
Գուշակաւոր խաղաղութեան բարեբաստ .
Եւ այր ցընկեր յուսապատար , կենեղուտ ,
Որդիք հարանց , մարանց մաղթեն զՏարեմուտ :

Նոր ամ , եւ նոր լուսապայծառ ծագէ տիւ ,
Արփային յարկ , եւ երկրաւորս օթեւանք
Զուարթաճաճանչ փայլին , խայտան նոր բաստիւ .
Աւետազուարճ ընդ լայնածիր կապուտակ
Գայ կարապետ ճեմեալ յոսկի ճանապարհ ,
Եւ ընդ նորին հետս ամանոր ընթանայ .
Թանգուզին ծուիք պաղեալ ամպոց ցիր եւ տար .
Շող գերարփի նըւաղ ի բիւ մեր ծըփայ .
Համայնից սիրտք մէն մի բաժակ պատարուն
Հընչեն մաղթանս կենդանութեան սերտ զեղուն :

Յառաջեսցեն ճոխաճեմ քայլք երկնընթաց
Հրադարչապար արեգական բոցավառ ,
Ոյր առ հետովք բնութիւն զծերոյթ սառնամած
Մերկեալ ի բաց , ըզմանկութիւն իւր պայծառ .
Դարձեալ զգեցցի ի հոյլս ծաղկանց պըճնազարդ .
Նորին ընդ գեղ հարեալ անդրէն մահացուին
Եւ ի կապել փունջըս ծաղկանց բարդ ի բարդ ,
Իցիւ թէ փուշ խայթէր ոչ զինք ցաւագին .
Եւ զըւարթուն ծիծաղախիտ Տարեմուտս
Քերեալ ըզմեօք գըլէր , քայլէր ճեմն անխուլթ :

Հ. Ա. Ե.